



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈՂԻՍ՝ ԱՍՏՕՈՒՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 2(17), 28 մարտի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐ

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՈՒՂԵՐԶԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Ոստիկանության կոլեգիայի, ողջ համակարգի անունից և անձամբ շնորհավորում են Մարտի 8-ի գարնան և գեղեցկության տոնի առթիվ: Շնորհավորում են մեր գործընկերուհիներին, որոնք, իրենց օջախների պահապանը լինելով, արժանապատվորեն կրում են ոստիկանի բարձր կոչու-

մը, լիարժեք իրականացնում հանրության ու քաղաքացու պաշտպանի առաքելությունը՝ պրոֆեսիոնալիզմով ու պատասխանատվությամբ չզիջելով տղամարդկանց:

Շնորհավորում են Արցախի Հանրապետության կին ոստիկաններին:

Շնորհավորում ու շնորհակալ են մեր վետերան կանանց, որոնք այսօր էլ շարքում են և ոստիկանական նոր սերնդին են փոխանցում իրենց հարուստ փորձը, հավատն ու հավատարմությունը ողջ կյանքի համար ընտրված գործին:

Շնորհավորում են ոստիկանության ծառայողների կանանց, մայրերին, քույրերին, դուստրերին, որոնք ամուր քիչու են օրենքին ու հայրենիքին ծառայող իրենց հարազատների համար:

Շնորհավորում են բոլոր կանանց: Խաղաղություն, շենություն, սիրով ու հպարտությամբ լեցուն օրեր են մաղթում բոլորիդ:

Երջանիկ եղեք:

Վալերիյ ՕՍԻՊՅԱՆ
ՀՀ ոստիկանության պետ

ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱԿԸ ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐՈՒՄ



Ծաղիկներ, Սևակ, մոր և սիրո մասին ասմունքի խոսքեր, հեզաճկուն աղջիկների ժողովրդական պարեր, հարվածային գործիքների, ջուրակի կատարումներ և ամենուրեք կանանց անհոգ ու երջանիկ ժպիտներ:

2019թ. մարտի 7-ին այսպիսի տրամադրությամբ մեկնարկեց կանանց միամսյակը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դահլիճում:

Միջոցառմանը մասնակցում էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անձնակազմը՝ կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի գլխավորությամբ:

Սկիզբը հուզիչ էր և պարտավորեցնող: Օրեր առաջ երկարամյա ծառայության կենսաթոշակի էր անցել արցախյան պատերազմի մասնակցի, կրթահամալիրի տնտեսական բաժնի հանդերձանքի, սպառազինության և հատուկ միջոցների ապահովման բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռազմիկ Տոնոյանը: Արժանին մատուցելով գործընկերոջը՝ զնահատանքի խոսքեր հնչեցրին կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանը, ոստիկանության փոխգնդապետներ Ա. Ալեքսանյանը և Յ. Մարգարյանը, որոնք, բարի ճանապարհ մաղթելով իրենց ծառայակից ընկերոջը, ներկայացրին նրա ծառայողական ուղին և ձեռքբերումները:

Ռ. Տոնոյանը շնորհակալություն հայտնեց և արժևորեց կրթահամալիրում իր անցած ուղին՝ ընդգծելով, որ այստեղ մեկտեղվել են այն մարդիկ, որոնք երկրի, հայրենիքի համար պիտանի ոստիկան ու քաղաքացի են կրթում:

Միջոցառումը լի էր անակնկալներով:

Մարտի 8-ի կապակցությամբ ծառայությունը բարեխղճորեն կատարելու համար ոստիկանության պետի հրամանով պարզևատրվեցին կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Լ. Գրիգորյանը, կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ս. Ավանեսյանը:

Միջոցառումը շարունակվեց բարի ավանդույթ դարձած համերգային ծրագրով: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողները և մեկ անգամ ապացուցեցին, որ ոստիկանի խիստ կերպարը համադրվում է ամբողջանում է զգացմունքայնությամբ, ստեղծագործելու և այլ շնորհներով: Նրանք և քոլեջի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր Գալինա Ռուսակովան կանանց, մայրերին, տատիկներին ու քույրերին շնորհավորեցին իրենց գեղեցիկ ելույթներով:

Համերգի ավարտին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ Մ. Բաբայանը գարնանային այս տոնի կապակցությամբ իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքի խոսքն հղեց կանանց և աղջիկներին:

- Սիրելի՛ մայրեր, քույրեր, կանայք և աղջիկներ, բոլորիդ շնորհավորում են կանանց տոնական միամսյակի մեկնարկի առթիվ: Աստված ձեր կարոտած որդիներին օտար ափերից թող տուն բերի, ձեր իմաստուն ծնողներին՝ խաղաղ ու անհոգ կյանքի վայելում, իսկ ձեր արժանավոր ամուսիններին՝ արժանապատիվ աշխատանք տա, ձեր առյուծասիրտ զինվոր զավակներին՝ հաղթանակած, հպարտ և առողջ վերադարձնի տուն, ձեր ձագուկներին՝ ջերմ, կուշտ և ապահով ժպիտով մեծացնի և այս երջանկությունը վայելելու համար թող որ ամուր առողջություն տա:

Սու՛տ է. հայ տղամարդուն չի հաղթի ո՛չ կինը, ո՛չ զինին: Հայ տղամարդուն հաղթելու միակ ճանապարհը որևէ չեղած, չտեսնված հնարքով նրա արժեհամակարգից մոր և կնոջ նկատմամբ պաշտամունքը վերացնելն է: Հայ սիրասուն կանայք, ձեր թոնրի կրակն անմար թող լինի, ձեր ձեռքերից՝ լավաշի բույրն անապակաս: Հայ մեղրածափիտ կանայք, բարու անսպառ ուսուցիչներ և անհագ աշակերտներ, ո՛վ կարող է առաքինությամբ ու բարությամբ Ձեզ հետ մրցել: Դուք, որ բարեկամին տրվածից ավելին օտարին եք տալիս, անդադար սիրո ու անսպառ ակնածանքի եք արժանի:

Սիրելի՛ կանայք, մայրեր ու քույրեր, եղեք միշտ մեր կողքին, որ ուժ տաք մեր մտքին ու բազկին:

ԱՐԵՎԱՇՈՂ ԵՐԿՐԻ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐՈՒՄ

Անվտանգության ոլորտում Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների խորքային հիմքն ունի հազարամյակների պատմություն: Այսօր էլ երկու երկրների իրավապահ համակարգերի և դրանց ուսումնական հաստատությունների միջև հարաբերություններն առավել սերտանում են:

Հայաստան կատարած երկօրյա աշխատանքային այցի շրջանակներում 2019թ. փետրվարի 25-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էր այցելել Իրանի Իսլամական Հանրապետության անվտանգության և ոստիկանության պատվիրակությունը, որը ղեկավարում էր ԻԻՀ ՆԳՆ անվտանգության հարցերի գլխավոր վարչության պետ Յուսեյն Քալանթարին: Պատվիրակությանն ուղեկցում էին նաև ՀՀ-ում Իրանի դեսպանատան ներկայացուցիչները:

Յուսեյնը դիմավորեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավար կազմը՝ կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ: Ողջունելով և այցի համար շնորհակալություն հայտնելով պարոն Բաբայանն առաջարկեց պատվիրակությանը ծանաչողական շրջայց կատարել կրթահամալիրի տարածքով:

Կրթահամալիրի ծառայողների օգնությամբ հյուրերը ծանոթացան ուսումնական կենտրոնի, վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետի, քոլեջի, ակադեմիայի կրթական ծրագրերին, գործունեությանը:

Յուսեյնը հետաքրքիր էին նաև կրթահամալիրի հատուկ և ընդհանուր գրադարանները, մարզադահլիճները, մասնագիտացված հատուկ լսարանները:

Նրանց հատկապես զարմացրեց քոլեջի լեզուների ամբիոնը, որտեղ մի խումբ սովորողներ պարսկերենով ողջունեցին հյուրերին, ապա ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանը



նույնպես պարսկերենով անդրադարձավ Իրանի պատմաշակութային առանձնահատկություններին: Այսքանով, սակայն, անակնկալները չսահմանափակվեցին: Ա. Հայրապետյանը պատվիրակության ղեկավարին նվիրեց ոստիկանության ծառայողների համար իր հեղինակած Հայերեն-պարսկերեն գրուցարանը: Նրանք եղան նաև կրթահամալիրի դահլիճում, ծանոթացան կրթահամալիրի և ոստիկանության պատմությանը՝ Մ. Բաբայանի ուղեկցությամբ այցելելով կրթահամալիրի ոստիկանության թանգարան:

Հանդիպումը շարունակվեց միստերի դահլիճում, որտեղ գեներալ-մայոր Մ. Բաբայանը ողջունեց հյուրերին և հույս հայտնեց, որ իրենց համագործակցությունը կլրի շարունակական բնույթ, և երկու երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունները կհամագործակցեն:

ԻԻՀ ՆԳՆ անվտանգության հարցերի գլխավոր վարչության պետ Յուսեյն Քալանթարին էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց ծանաչողական այցը բովանդակալից և հետաքրքիր դարձնելու համար:

Ըստ նրա Հայաստանի և Իրանի հարաբերությունները նման են ամուր արմատներ ունեցող այն բազմադարյա ծառին, որն անհնար է երբևէ արմատախիլ անել:

Իրանի ՆԳՆ անվտանգության հարցերի գլխավոր վարչության պետ նաև ներկայացրեց իրենց երկրի ոստիկանական ստորաբաժանումների առանձնահատկությունները և հավանություն տալով Մ. Բաբայանի առաջարկին, այն է՝ ուսումնական հաստատությունների միջև համագործակցությունը պետք է կրի համախալի և շարունակական բնույթ:

Յուսեյն Քալանթարին խոսեց նաև Իրանում ոստիկանական ուսումնական հաստատության բակալավիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի, ինչպես նաև փորձի փոխանակման դասընթացների կազմակերպման մասին:

Հանդիպման ավարտին կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, հուշանվերներ հանձնելով պատվիրակության անդամներին, այցելության համար իր շնորհակալությունն արտահայտեց հետևյալ խոսքերով. «Ձեր արևաշող երկիր վերադառնալիս մեզ չմոռանաք»:

Աճի Դուկայան
միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է

Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով արդեն իսկ ավանդույթ է դարձել կրթահամալիրի ղեկավարի հանդիպումը սովորողների հետ:

Փետրվարի 27-ին նման հանդիպում տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի և կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին և երկրորդ կուրսերի սովորողների միջև: Հանդիպմանը մասնակցում էին նաև ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը, կրթության որակի ապահովման բաժանմունքի պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Տ. Խաչատրյանը, մագիստրատուրայի բաժանմունքի պետը և տեսչական կազմը: Օրակարգում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձ-



կրթահամալիրի պետի հաջորդ հանդիպումը սովորողների հետ տեղի ունեցավ մարտի 15-ին: Այս անգամ հանդիպման էին ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 1-3-րդ կուրսերի սովորողները: Հանդիպմանը մասնակցում էին նաև կրթահամալիրի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Գալոյանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը, ինչպես նաև կրթահամալիրի սպայական կազմի ներկայացուցիչները:

Օրակարգում ուսումնական գործընթացի և կարգապահության ամրապնդման վերաբերյալ հարցեր էին: Կարևորելով ուսումնական պարապմունքների արդյունավետության բարձրացումը՝ կրթահամալիրի պետը ներկայացրեց ուսանողակներին քաղաքականության շրջանակներում իրականացված աշխատանքները, ընդունված իրավական փաստաթղթերը, որոնք միտված են բուհի կառավարմանը սովորողների ներգրավվածության, ուսումնական գործընթացում նրանց դերակատարության բարձրացմանը:

Արձանագրելով ընթացիկ առաջադիմության և գերազանցիկների թվի առաջընթաց՝ կրթահամալիրի պետը հորդորեց չբավարարվել առկա ձեռքբերումներով: Նա վերահաստատեց ուսումնական գործընթացի շարունակական բարելավման համար բոլոր սովորողների կարծիքը հաշվի առնելու պատրաստակամությունը: Հանդիպման ավարտին ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը պատասխանեց սովորողների հարցերին:

Ռուսլան Մարանյան
իրավագիտության ֆակուլտետի պետ,
ի.գ.թ., ոստիկանության փոխգնդապետ



րացման վերաբերյալ հարցեր էին: Կրթահամալիրի պետն իր խոսքում նշեց, որ ուսումնական գործընթացի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներում կարևորում է մագիստրոսների կարծիքը, քանի որ վերջիններս աշխատանքային փորձ ունեն և կարող են իրենց առաջարկություններով նպաստել ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների ներդրմանը: Ուսումնական գործընթացի ճշգրիտ կազմակերպման ու բարելավումներ իրականացնելու քաղաքականության հարցերին անդրադարձավ ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը և կարևորեց սովորողի որպես ուսումնական գործընթացի կազմակերպման սուբյեկտի դերակատարությունը: Պարոն Բաբայանը լսեց սովորողների կարծիքներն ուսումնական գործընթացի բարելավման վերաբերյալ և պատասխանեց հնչեցված մի շարք հարցերի:

ԱՐՅԵՍԱԿԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՄԱՏՈՒՅԵՑ

Ահա և երկար սպասված գարունն ազդարարեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի արհեստակցական միության ամենամյա գործունեության ամենազեղեցիկ հատվածի մեկնարկը: Արհմիության անդամ կանանց համար ամեն գարուն կազմակերպվում են տոնական միջոցառումներ և հանձնվում նվերներ:

Այս գարունը ևս բացառություն չէր: Մարտի 7-ին արհմիության անդամ զեղեցիկ սեռի բոլոր ներկայացուցիչները նվեր ստացան (սպասքի հավաքածու), հնչեցին ջերմ խոսքեր և բարեմաղթանքներ:

Կրթահամալիրի արհմիությունը հաջորդիվ նախատեսում է արհմիության անդամ աշխատակիցների երեխաներին ճամբարի անվճար ուղեգրերի տրամադրում և աշխատակիցների ամառային հանգստի ապահովում ՀՀ-ում գտնվող տարբեր հանգստյան տներում:



Սոցիալական կյանքում 21-րդ դարի կնոջ դերի ու նշանակության հարցը վաղուց դարձել է անվիճելի իրողություն: Նրանց հաջողություններին կարելի է ականատես լինել տարբեր բնագավառներում, այդ թվում և իրավապահ համակարգում:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակը 2018 թվականի դեկտեմբերի 11-ից 14-ը արդարադատության ակադեմիայում անցկացրեց «Կանանց դերը արդարադատությունում» թեմայով համաժողով: Քառօրյա համաժողովը համախմբել էր իրավապահ ոլորտում աշխատող տարբեր կանանց (դատավորներ, փաստաբաններ, քննիչներ, դատա-

ԿԱՆԱՅԵ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

խազներ, ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ, ԱՄՆ-ից ժամանած փորձագետներ)՝ քննարկելու և իրականացնելու սոցիալական կյանքում ժամանակակից կնոջ դերն ու նշանակությունը, ինչպես նաև բարձրացնելու մասնագիտական որակը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ներկայացնում էին ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Ամալյա Սաֆարյանը, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Մերի Մանուկյանը:

Մասնակիցներն ամերիկացի փորձագետների հետ անդրադարձան տարբեր հասարակարգերում արդարադատության համակարգում աշխատող կանանց մասնագիտական դրսևորումների առանձնահատկություններին:

Մերի Մանուկյանը ընդգծեց, որ ԱՄՆ-ի և Հայաստանի մշակութային տարբերություններն ակնհայտ են.

- Արդարադատության բնագավառի հայ կանանցից յուրաքանչյուրը նախևառաջ ընտանիքի մայր է: Լինելով ընտանիքի մայր՝ հայ կինն իր ողջ հմտությունն է ներդնում նաև արդարադատության բնագավառում: Յուրաքանչյուր հայ կին, չանտեսելով իր ընտանիքը, նվիրվում է իր աշխատանքին՝ ցուցաբերելով նախաձեռնողականություն, ստեղծագործ մոտեցում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԱՅԱԾՈՒՄ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը երրորդ հանրապետության ստեղծումից հետո բազմիցս վերակազմավորվել և վերանվանվել է: Մասնավորապես 1990-1992 թթ. երևանի միլիցիայի միջին մասնագիտական դպրոցը գործել է որպես ԽՍՀՄ ՆԳՆ ակադեմիայի ֆակուլտետ: ՀՀ ներքին գործերի նախարարի 1992 թվականի մարտի 25-ի թիվ 131 հրամանով սահմանվել է «ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության լուծարման կապակցությամբ ԽՍՀՄ ՆԳՆ ակադեմիայի ֆակուլտետը 1992 թ. հունվարի 1-ից համարել ՀՀ ՆԳ նախարարության կազմի մեջ՝ վերանվանելով այն ՀՀ ներքին գործերի նախարարության երևանի բարձրագույն դպրոց»:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1995 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցի մասին» N 197 որոշմամբ ստեղծվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը, որը նախորդի իրավահաջորդն էր: Այնուհետև՝ երկու տարի անց, ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 311 որոշմամբ ստեղծվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցը:

Նշված որոշմամբ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցը պետական բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություն է:

Դպրոցի հիմնական խնդիրներն էին՝

- ա) իրավաբանական և ծառայողական կրթությամբ հրամանատարական կազմի մասնագետների պատրաստումը.
- բ) ներքին գործերի համակարգի միջին և ավագ հրամանատարական կազմի որակավորման բարձրացումը և վերապատրաստումը.
- գ) գիտամանկավարժական կադրերի պատրաստումը.
- դ) ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը:

Դպրոցի ուսումնագիտական կառուցվածքային ստորաբաժանումը ֆակուլտետն էր, որն ստեղծվում էր ըստ ընդհանուր մասնագիտական կողմնորոշման կամ ըստ գործունեության բնույթի:

Ֆակուլտետի կազմում գործում էին ամբիոններ և այլ ուսումնագիտական ստորաբաժանումներ:

ՀՀ կառավարության 1999 թվականի սեպտեմբերի 14-ի «ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի թիվ 311 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 566 որոշմամբ դպրոցը վերանվանվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոց: Պետք է նշել, որ այս պարագայում գրեթե ամբողջովին պահպանվում է նախորդ կանոնադրությունը, և դպրոցի խնդիրներն ու գործառնությունները մնում են անփոփոխ: Անհրաժեշտ է նկատել, որ այս փոփոխությամբ ուժը կորցնում է կանոնադրության 24-րդ կետի երկրորդ պարբերությունը, որով սահմանվում էր, որ դպրոցը ընդունվելու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ժամկետային զինվորական ծառայություն անցած ու Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության մարմիններում մեկ տարուց ոչ պակաս ծառայության մեջ գտնվող անձինքը: Հենց այս փոփոխությունն էլ առկա ուսուցման ձևով կրթություն ստացող առաջին և երկրորդ կուրսերի սովորողներին (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայություն անցած սովորողների և իզական սեռի սովորողների) զորանուցում պահելու կարգի իրավական հիմքն է ստեղծում:

Շարունակելի...

Արտակ Մնացականյան
գիտական աշխատանքների բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ոստիկանության մայոր

Ոստիկանության փոխգնդապետը նաև կատարեց փոքրիկ համեմատական վերլուծություն:

-Այլազգի կանանց հետ մնամությունները դրսևորվում են համարձակությամբ, նպատակալացությամբ, կանանց իրավունքների մասին տեղեկատվության տարածմամբ, բարձր պաշտոնների ձգտելու և կառավարման ճկունությամբ:

Հարցին, թե ինչ նոր գիտելիքներ և հմտություններ տվեց դասընթացը մասնակիցներին, ոստիկանության փոխգնդապետը պատասխանեց, որ համաժողովը կազմակերպվել էր փորձի փոխանակման շրջանակներում, որը բավականին արդյունավետ էր:

Արդարադատության բնագավառում հաջողության հասած փորձագետ կանայք ներկայացրին իրենց անցած ուղին ու եկան այն եզրահանգման, որ ցանկացած ձեռքբերման համար անհրաժեշտ է աշխատանքը կատարել սիրով, նվիրվածությամբ: Վերջում ձևավորվեցին արդարադատության բնագավառում ճկուն կառավարում իրականացնելու ձգտումներ և եզրահանգեցին, որ ժամանակակից է այն կարծիքը, թե կանայք թույլ են, և նրանց աշխատանքը միայն խոհանոցում է:

Անի Դուկասյան
միջազգային համագործակցության և ՏՏ
ներդրման բաժնի տեսուչ,
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՊՆ Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ



Հոստիկանության կրթահամալիրի ղեկավար կազմի ծառայողները կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի ղեկավարությամբ մարտի 15-ին այցելեցին ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան:

Պատվիրակության կազմում էին կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ս. Եսայանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Գ. Գրիգորյանը և մի խումբ այլ սպաներ:

Յյուրերին դիմավորեց ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի ժամանակավոր պաշտոնակատար, գեներալ-մայոր Խ.

Խաչատրյանը և հակիրճ պատմեց համալսարանի մասին:

Կողմերը քննարկեցին ուսումնական ծրագրերի, հավատարմագրման գործընթացի և հետագա համագործակցությանը վերաբերող հարցեր: Համատեղ ծրագրերի իրականացման և սովորողների փոխանակման գործընթացի վերաբերյալ ռազմական համալսարանի պետն առաջարկեց դիտարկել ոստիկանության ծառայողների ուսուցումը ռազմական համալսարանի մագիստրատուրայում և կրթահամալիրի ուսումնական ծրագրերում ամերիկեշտ և իրենց մոտ առկա նյութատեխնիկական միջոցների տրամադրման

աջակցելու պատրաստակամություն հայտնեց: Կրթահամալիրի պետը, շնորհակալություն հայտնելով պատրաստակամության համար, ներկայացրեց կրթահամալիրում իրականացվող ուսումնական գործընթացն առաջարկեց ռազմական համալսարանի ուսանողների իրավական գիտելիքների բարձրացման ուղղությամբ կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացնել հատուկ ուսումնական ծրագիր:

Հատուկ ուշադրություն դարձվեց պետական հավատարմագրման գործընթացին և այդ ուղղությամբ համալսարանի անցած փորձին: Խ. Խաչատրյանը վստահություն

հայտնեց, որ իրենց ուժերի ներածին չափով կօժանդակեն կրթահամալիրի պետական հավատարմագրմանը:

Այնուհետև գեներալ-մայոր Խ. Խաչատրյանի ուղեկցությամբ կրթահամալիրի պատվիրակությունը շրջեց համալսարանի տարածքով այցելելով համագործակցության և հրամանատարաշտաբային ֆակուլտետներ, որտեղ ամբիոնի պետերը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը ներկայացրին դասապրոցեսում կիրառվող ժամանակակից տեխնիկական միջոցները, AK-74 ինքնաձիգի նշանակետի համալիրները, ժամանակակից համագործակցության մարտում օգտագործվող սպառազինությունը և տեխնիկան, վիրտուալ հրաձգարանները:

Հանդիպման ավարտին կրթահամալիրի պետը, շնորհակալություն հայտնելով արդյունավետ հանդիպման համար, հետագա համագործակցությունն ամրապնդելու և զարգացնելու նպատակով ռազմական համալսարանի պետին հրավիրեց կրթահամալիր:

Գրիգորի Դավթյանի միջազգային համագործակցության և ՏՏ մերդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ

ՀՎԱ ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՉ ՄԻ ԲԱՆԱԼԻ ԴՈՆԵՐԸ ՄԻՇՏ ԲԱՑ ԵՆ

2012 թվականից մարտի 20-ը համարվում է **Երջանկության միջազգային օր** (International day of happiness)՝ նպատակ ունենալով պաշտպանել այն գաղափարը, որ երջանկության ձգտումը համամարդկային է: Այդ կապակցությամբ երկրներին կոչ է ուղղված՝ ջանքեր գործադրել յուրաքանչյուր մարդու բարեկեցության և երջանկության համար: Երջանկության միջազգային օրն ընդունվել է հաստատվել է ՄԱԿ-ի անդամ 193 պետությունների ներկայացուցիչների 66/281 բանաձևի միաձայն որոշմամբ: Ի՞նչ է երջանկությունը. եթե այս հարցը տանք մեզանից յուրաքանչյուրին, կստանանք այլազան և հակասական պատասխաններ: Մարդն իր տեսակով եզակի է, քանի որ երջանկությունն որոնելու ճանապարհին կարող է կույրի պես չնկատել իրական երջանկությունը, նա միշտ անիմանալի է ձգտում կարծելով, որ այնտեղ են թաքցված երջանկության գաղտնիքները: Մենք երջանկի ենք յուրովի, երջանկի ենք մեզ համար, մեզ երջանկացնող մարդկացի համար: Երջանկությունը դժվար է գտնել և առավել դժվար է այն պահպանել այնպես, ինչպես մայրն իր գավակին, ինչպես արծիվն իր ձագերին: Շատ հաճախ մեզ երջանկի ենք զգում, հաճախ էլ ոչ, որովհետև չգիտենք դրա արժեքը, քաղցրությունն ու կարևորությունը: Մեկն իր երջանկությունը որոնում է վայելքների, խաղաճառության, սպառող ու այլասերող հաճույքների մեջ, ուրիշ մեկի համար նման կյանքն անդարձանելի դժբախտություն է, մեկի համար երջանկությունն աշխատանքի մեջ է, և չի կարող ըմբռնել, թե ուրիշներն ինչպես կարող են երջանկություն գտնել ծուլության ու անգործության մեջ, մյուսի համար երջանկության լավագույն սահմանումն ընտանիքը, ծնողների խաղաղ և անարցունք աչքերը, մանուկներն են: Երջանկի ես, երբ ունես հայր, մայր, քույր, եղբայր, սիրելի կողակից, գավակ, փոխադարձ հարգանքով ընտանիք և պարուրված ես սիրով: Երջանկություն է, երբ արթնացել ես ու գիտես, որ քեզ սիրող և սպասող մարդիկ կան, որ պետք էս ինչ-որ մեկին, որ պետք է ապրես հանուն նրանց: Հագեցած ստամոքսով, առատ սեղանով, բարձր աշխատավարձով կամ ուրախ տրամադրությամբ չես կարող երջանկի լինել, երջանկի կլինես միայն հոգով: **Հարմարավետություն մեջ երջանկությունն չկա: Երջանկությունը տառապանքով է գնվում: Մարդը միշտ էլ տառապանքով է վաստակում երջանկությունը** («Ռճիր և պատիժ» Ֆ. Դոստոևսկի): Երջանկության վրա է հիմնված մեր կյանքը: Երջանկի է այն մարդը, որ ի գործ է երջանկացնել, իր կողքին պահել երջանկությունը, սերը և միշտ սրտում ունենալ այնպիսի զգացողություն, որ կարողանա բղավել ես երջանի՜կ եմ: Փոխիտվաները երջանկությունը սահմանում են որպես բարեկեցիկ ապրելաձև և ոչ զգացում: Հին հունարենում երջանկություն բառը «ելլե-մոնիա», բառացիորեն նշանակել է աստվածների հովանու տակ գտնվող մարդու ճակատագիր: Սրա հիման վրա էլ ձևավորվել է տեսակետ, որ երջանկի լինել, նշանակում է արժանանալ աստվածների բարեհաճությանը, լինել հաջողակ: Երջանկության նման ընկալման պարագայում ստացվում է, որ ոչինչ կախված չէ մարդուց: Իհարկե, կյանքում բախտը կարող է ժպտալ մարդուն, բայց դա դեռևս երջանկություն չէ, քանի որ պատրաստի տրվածը ոչ միշտ է առաջացնում երջանկության զգացում: Հին հույն բարոյագետ Էպիկուրի կարծիքով երջանկությունը մարդու այն հոգեվիճակն է, երբ նա հանգստության, հոգեկան անդորրի մեջ է: Երջանկությունը շատ հաճախ նույնացվում է ուրախության հետ, սակայն դրանք տարբեր են: Մարդն ուրախությունն ապրում է առանձին իրադարձությունների պարագայում, իսկ երջանկությունը տևական ուրախություն է: Ուրախությունն արտահայտվում է ավելի բուռն, ավելի հուզականորեն, իսկ երջանկությունը՝ ավելի չափավոր: Երջանկության երկու մոտեցում կա. առաջինը՝ երբ երջանկությունը ճակատագրի նվերն է, պատահականություն, մյուսը՝ երջանկությունն ամբողջությամբ կախված է մարդուց, նրա ներաշխարհից, բնավորությունից, կամքից և ձգտումներից: Ժան-ժակ Ռուսոն ասել է. «Երջանկի լինելու արվեստն այն գիտակցումն է, որ երջանկությունը թո՛ղ ձեռք բերում է»: Մարդիկ երբեք չեն բավարարվում ձեռք բերածով, երջանկությունը հակասական է: Այն բավարարվածության և անբավարարվածության հերթափոխ է՝ նոր նվաճումների ձգտման զգացումով: Երջանկությունը բացառում է եսասիրությունը, սուտը, նախանձն ու հիշաչարությունը: Բարեգութ և լավ դաստիարակված մարդը չի կարող իրեն երջանկի զգալ, երբ շրջապատում շատերը դժբախտ են: Մարդն ինչքան քիչ մտածի երջանկի լինելու մասին, այնքան ավելի երջանկի կլինի, և, հակառակը, որքան ավելի շատ ձգտի երջանկության, այնքան ավելի դժվար կլինի երջանկության հասնելը: Բոլոր գաղտնիքները և բանալիները մեր ձեռքում են, պարզապես պետք է բացել հոգու աչքերը՝ դրանք տեսնելու և վայելելու համար: Պարզապես երջանկի եղեք, եթե կարող եք:

ՀԱՅ ԿԻՆՈՅԻ ԵՎ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՅՐ ՍԻՐԱՆՈՒՅՇԸ ԿԱՍ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՅԸ

«Բարև Ձեզի, ես տաղանդավոր դերասան Արմեն Մելիքյանի մայրն եմ...», «Նկարվեք, նկարվեք, աշխարհը ձեր վրեն կխնդա...», «Ես պիտի լույսը վառեմ- մարեմ, վառեմ-մարեմ...»:

Կարդալով այս տողերը՝ միանգամից հիշում ենք «Մեր մանկության տանգոն» ֆիլմը և հասկանում, որ խոսքը Սիրանուշի մասին է, որին մարմնավորում էր արդի հայ կինոյի և թատրոնի մայր, հայ կնոջ կերպարը տիպիկ մարմնավորող դերասանուհի Գալյա Նովենցը: Որքան խորություն ու միաժամանակ ցավ կար նրա խոսքերում:

Ֆիլմի յուրաքանչյուր արտահայտություն ասացվածք է դարձել, ու մենք գրեթե ամեն օր դրանք լսում ենք մեր տատերի խրատների և խոսքերի մեջ:

Նովենցն իր հարցազրույցներին մեկուսի ասել է, որ իրեն վստահեցին լավագույն դերը՝ Սիրանուշի կերպարը: Իր և Սիրանուշի մեջ մեծ նմանություն է տեսնում. նա էլ շատ նվիրված էր ընտանիքին, երեխաներին, իր կյանքի դժվար պահերին էլ միշտ պայքարի մեջ էր: Նրա բարությունը, միամտությունն ու անկեղծությունն էր իրեն դուր գալիս:

Դերասանուհի դառնալու ցանկությունը մեծ էր: Գալյան կաննում էր դառնալ կինոդերասանուհի, ուստի մեկնեց Մոսկվա, դիմեց կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտ, սակայն շատ-շատերն էին ցանկանում կինոդերասան դառնալ, և բախտը նրան չժպտաց. միավորները չբավարարեցին այս նշանավոր բուհի ուսանողուհի դառնալու համար:

Վերադարձավ Երևան և 1954 թվականին ընդունվեց Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտ, ավարտեց ակադեմիկոս մանկավարժ և բեմադրիչ Արմեն Գուլակյանի ստեղծագործական արվեստանոցը, որտեղ սովորում էին նաև Արմեն Զիգարիանյանը, այժմ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Հենրիկ Հովհաննիսյանը, Երվանդ Ղազանջյանը, Բարիստղար Ղազիսյանը, Արծրունի Սանուկյանը, Գուժ Մանուկյանը և ուրիշներ:

Գալյա Նովենցին ճշմարիտ ժողովրդականություն ու մեծ ճանաչում բերեցին բոլոր այն ֆիլմերը, որոնցում նկարահանվել է, իսկ նա՝ հայկական կինոյի ամենից շատ նկարահանված դերասանուհին, 20-րդ դարի ազգային կինեմատոգրաֆիայի մեծություններից մեկն է, որը հաստատեց հայի կերպարի նոր ըմբռնումներ, փոխեց կինոյում ձևավորված պատկերացումները հայ կնոջ մասին:

«Բարև, ես եմ», «Մենք ենք, մեր սարերը», «Այստեղ, խաչներուկում», «Նահապետ», «Կտոր մը երկինք», «Ո՛ր



էիր, մա՛րդ աստծո», «Հին օրերի երգը», «Մեր մանկության տանգոն» և այլ ֆիլմեր հնարավորություն տվեցին Գալյա Նովենցին լիովին բացահայտելու իր դերասանական նկարագիրը, զեղարվեստական-զեղագիտական յուրատիպությունները: «Մեր մանկության տանգոն» ֆիլմը Գալյա Նովենցի «աստեղային ժամը» եղավ և առիթ տվեց համաշխարհային կինոյի շատ մեծությունների հիանալու նրանով: Նայելով մեծ դերասանուհու մարմնավորած կերպարներին՝ յուրաքանչյուրս տեսնում ենք մեր տատերին ու մայրերին, և մեկ անգամ առիթ ենք ունենում հեռուստաէկրանից այս կողմ զգալու հայ կնոջ, հայ մոր տիեզերական սերն ու անսահման նվիրումը:

Իսկ վերջում, ինչպես կասեր հայտնի ֆիլմի հայտնի Սիրանուշը. «Կեղնի՞ մե օր, որ երկնքից տեսնիմ, թե ես աշխարհը ընչի՞ է եսպես ծուռ...»:

Մարիետա Խերանյան գիտական աշխատանքների բաժնի գիտաշխատող, ոստիկանության ավագ լեյտենանտ

Լիանա Խրշոյան ծառայության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ

Շախմատը կամ ճատրակը երկու խաղացողի համար նախատեսված սեղանի խաղ է, որը խաղում են հաջորդաբար, 64 դաշտ ունեցող (8x8 վանդակ) քառանկյուն բաց և մուգ խաղատախտակի վրա: Այն աշխարհում ամենատարածված խաղերից է: Միլիոնավոր մարդիկ շախմատ են խաղում տանը, հասարակական վայրերում, շախմատային ակումբներում, առցանց, նամակագրությամբ և մրցաշարերում: Շախմատային պարտիայի (խաղի) սկզբում խաղացողներից յուրաքանչյուրն ունենում է 16 խաղաքար՝ արքա, թագուհի, երկու նավակ, երկու ձի, երկու փիղ և ութ զինվոր: Վեց տեսակի խաղաքարերից յուրաքանչյուրը քայլում է յուրովի, որոնք օգտագործվում են հակառակորդին հարվածելու և խաղաքարը վերցնելու համար: Խաղի նպատակն է «մատ» հայտարարել հակառակորդի արքային, այն է՝ «հարվածի տակ վերցնել» հակառակորդի ար-

ՇԱԽՄԱՏԸ ՈՐՊԵՍ ՄՏԱՎՈՐ ԽԱՂԻ ՏԵՍԱԿ



քային այնպես, որ հարվածից հնարավոր չլինի խուսափել: Բացի «մատ» հայտարարելու դիրքից, խաղը համարվում է շահած՝ ա) եթե հակառակորդն ինքնակամ հանձնվում է, բ) եթե հակառակորդն սպառել է ժամանակը կամ չի ներկայացել

խաղին: Խաղը համարվում է ոչ - ոքի ավարտված՝ ա) եթե խաղատախտակի վրա «պատ» է (տվյալ խաղացողը չունի ոչ մի քայլ), բ) կողմերից մեկը հայտարարում է հավերժական շախ, կամ դիրքը կրկնվում է երեք ան-

գամ, գ) եթե բոլոր դեպքերում քայլ պետք է անի նույն խաղացողը: Շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսին առաջինն արժանացել է Վիլհելմ Ստեյնիցը 1886 թ., իսկ աշխարհի ներկայիս չեմպիոնը Մագնիուս Կարլսենն է: Անցկացվում են նաև կանանց, պատանիների, մեծահասակների շախմատի աշխարհի առաջնություն, նամակագրությամբ շախմատի աշխարհի առաջնություն, արագ շախմատի և համակարգչային շախմատի աշխարհի առաջնություն: Գր Կոստիկանովսկին ընդհանուր և մեծ մասսայականություն է վայելում շախմատը՝ որպես մտավոր խաղի տեսակ, որն ընդգրկված է Գր Կոստիկանովսկու ծառայողակիրառական մարզաձևերի սպորտային միջոցառումների տարեկան օրացուցային պլանում: Ըստ այդ պլանի՝ ոստիկանության տարբեր ստորա-

բաժանումների միջև ամեն տարի անցկացվում է արագ շախմատի առաջնություն: 2019թ. փետրվարի 13-ից 15-ը երևանում անցկացվեց հեթաթական առաջնությունը: Գր ոստիկանության կրթահամալիրի թիմը՝ ոստիկանության փոխգնդապետ Ա. Բաբախանյանի, ոստիկանության փոխգնդապետ Գ. Կուծանյանի, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սարգսյանի մասնակցությամբ, 21 թիմերի մրցապայքարում գրավեց պատվավոր 2-րդ հորիզոնականը և պարգևատրվեց դիպլոմներով: Թիմը ներկայացնում էր ոստիկանության փոխգնդապետ Ա. Մինասյանը: Գր ոստիկանության կրթահամալիրի պետի 99-Ա իրամանով թիմի ներկայացուցիչներին հայտարարվեց «Շնորհակալություն»:

Ալեքսանդր Սարտուրով
մարտական, ֆիզիկական և ԳՏՊ
ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության փոխգնդապետ

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆԿԻՐՎԱԾ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԹՈՆ

Մարտի 20-ի Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան ընդառաջ՝ Գր ոստիկանության կրթահամալիրի ֆրանսերենի խմբի սովորողները լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Զայրապետյանի գլխավորությամբ հայկական «Ալիանս ֆրանսեզ»-ում մասնակցեցին ընթերցանության մարաթոնին: Մարաթոնը կազմակերպվում և անցկացվում է ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ մի շարք երկրներում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում: Մարաթոնի մասնակից-

ներն ամբողջ օրվա ընթացքում ընթերցում էին ժամ Մարք Տուրինի «Գետերի Տեոն» վեպը, որն արժանացել է ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հատուկ մրցանակի: Սովորողները ծանոթացան ընթերցվող վեպի բովանդակությանը և հնարավորություն ունեցան շփվելու ֆրանսախոս հայերի հետ: Օրվա խորհրդով և ֆրանսիական մշակութային միջավայրով ոգեշնչված՝ նրանք խոստացան այսուհետ կրկնապատիկ ջանասիրությամբ կատարելագործել ֆրանսերենի իմացությունը:



ՄՏԵՂՃԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

ԱՂՈԹՈՒՄ ԵՄ ԾՆՐԱԴԻՐ

Դու ի՞նչ երկնքից
Ու սփռեցիր լույս ու շող,
Արարեցիր ջուր ու հող,
Հավատ տվիր բոլորին:

Արարեցիր հույս ու սեր,
Մեր գթառատ միակ Տեր,
Որ հավատանք ու հուսանք,
Անճարներին միշտ գթանք:

Աղոթում են ծնրադիր.
Ես ազգ ունեմ տարագիր...
Փառավորի՛ր Հայաստանը,
Որ հայն ապրի միշտ իր տանը:



Վաչագան Շահբազյան
ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի
4-րդ կուրսի սովորող

ՀԱՎԱՏԱՎ

Մի՛ տխրիր, եթե ոտքդ գայթեկ է,
Թե հողը դողում է ոտքիդ տակ,
Թե անգամ ամպրոպը շաչում է,
Եվ շանթը մտրակում է շարունակ:
Թե հատվել են վերջին ուժերդ,
Ու ջանքերդ համարում են զուր,
Մի՛ տխրիր, հավատա՛...
Հավատա՛՛ հավատին քո հզոր:
Մարտադաշտում մեկն էլ զինվոր է,
Ու հաղթում է, ով անվախ է ու քաջ,
Ով արհամարհում է մահը
Եվ հաղթական քայլում է առաջ:
Ով մահվան սև երախում էլ
Չի ուրանում ՀԱՅՐԵՆԻՔ ու ԱՍՏՎԱԾ,
Ու որպես մվիրյալ մի զինվոր՝
Հավատում է հավատին իր հզոր:



Ռոզա Մուսայեյան
լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

- * Այրոց դեմքի շրջանում,
- * ոտքի վրա կանգնելու անկարողություն,
- * շրթունքի ճաքում,
- * տարիքին անհամապատասխան զգացողություն,
- * ակտիվ արցունքարտադրություն,
- * թեթևության զգացողություն:

Ո՞վ է բարձրաձայնել այս բոլոր նշանների արտահայտման մասին, և ե՞րբ էր նա զգում այդ նշանները:

Պատասխան

:ովզոոո ցոտոոոոուու և՛ և՛ ցոսս ցոցոլ ցլզցցոոոց նոու հով 'ցցոլոլոլ սցոու և՛ և՛ցլոլոլոլոլոլոլ ցցոլ ցոլոլոլոլոլոլոլոլոլ «ովզոոո ցոտոոոուու» սվ ցլոլոլ նոլ

Սիսակ Մարկոսյան
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ
ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ

ՊԱՏՎԵՐ ԵՎ ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ



ՍԻՐՈՎ ԵՄ ԸՆՏՐԵԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՍ

Ես սիրով եմ ընտրել ոստիկանի մասնագիտությունը, ընտրել եմ այն գիտակցումով, որ ոստիկանը հասարակության պաշտպանն է, ընտրել եմ, քանի որ ինքս մեծ ակնածանքով եմ վերաբերվում մարդու արժանապատվությանն ու պատվին՝ մարդու բարձրագույն արժեքներից:

Լինելով ապագա ոստիկան՝ գիտակցում եմ, որ իմ կրելի «խաչը» պատիվն է: «Պատիվը ծախսում էին, գնորդ չգտնվեց, պատիվ էին գնում, ծախսող չգտնվեց»,- ակամայից հիշեցի հայկական այս գեղեցիկ ու սրբաբանական ասացվածքը:

Պատվի գիտակցումը պետք է դիտարկվի ոչ թե պատիվ՝ պատվի համար, այլ այն պետք է ձևավորի մարդուն որպես ազգի դիմագիծ:

Ես այն կարծիքին եմ, որ իրական ոստիկանն իր վարքով պետք է նպաստի հասարակության այն համոզմունքի և հավատի ձևավորմանն ու պահպանմանը, որ ոստիկանի ծառայությունը հիմնված է անկողմնակալության, արդարամտության, ազնվության և փոխվստահության

սկզբունքների վրա:

Չեմ կարծում, որ ապագայում ծառայությունս հեշտ կլինի, բայց իմ գիտակցության մեջ ու սրտում ամուր պետք է պահեմ և հիշեմ այն բոլոր արժեքներն ու մարդկային բարոյական հատկանիշները, որոնցով պետք է առաջնորդվեմ ես՝ ապագա ոստիկանս:

Պարզ և հանդիպան
ուսումնական կենտրոնի սովորող,
ոստիկանության կրտսեր սերժանտ